

- ՌԱՇՏ. Ս. Գրիգորեան.**—Достоевский-ի «Униженные и оскорбленные» վէպի Ձեր թարգմանութիւնը, ընդարձակութեան պատճառով, չենք կարող տպել:
- ԴԵՐՅԷՆԴ. Տրդրան Բ. Վ.**—«Արտաւազդը» չենք կարող տպել:
- ՀԱԼԼԷ. Յ. ԲՈՂԻԵԱՆ.**—Ստացանք Հ. Իբսէնի «Երբ մենք մահից յարութիւն առնենք» էպիլոգի հայ թարգմանութիւնը: Այդ մասին Ձեզ նամակ գրեցինք:
- ԷՋՄԻԱՇԻՆ. Արամ Դատեան.**—Ձեր աշխատասիրած «Հայ մատենագրութեան մեծ համարարանը», որի նմուշն ուղարկել էք մեզ, անհամապատասխան է մեր թերթի համար, ուստի և չենք կարող տպել. վարձատրութեան մասին արդէն չի կարող խօսք լինել:
- ՆՈՐ ԲԱՅԱԶԻՐ. Պետր. Շնորհակալութիւն** Ձեր արտայայտած դպացումների համար. սակայն թերթիս «լայն տարածումը հայութեան բոլոր վայրերում, բոլոր խաւերում» մեզանից չէ կախուած. թող «Լուսնայի» անկեղծ բարեկամները աշխատեն տարածել մեր ամսագիրը, այն ժամանակ նորա բովանդակութիւնն էլ աւելի հարուստ կլինի:
- ՄՈՍԿՈՒԱ. Ղ. Բեմէյէճեան.** յունուարը վաղուց անցաւ. մենք Ձեզանից պատասխանի ենք սպասում:
- ՇՈՒՇԻ. Արզար Մեսրոպեան.** Ձեր պատուական նամակն ստացանք. յանունս շնորհակալ ենք Ձեր և ձերոնց ազնիւ զգացումներն ի համար: Ձեր խնդրած բացատրութիւնը զրով զրկել չենք կարող ցաւօք սրտի: Միայն կարող ենք վստահացնել մեր սիրելի բարեկամներին, թէ ձեր բարտապան զայրոյթն և վրդովմունքն արդար է: Հազար երանի, եթէ դուք և ձեզ նման շատերը բարոյապէս զայրանալ և ցնցուել զիտենային այն ամեն աչքակապութեանց դէմ, որոնք ազնուութեան անունով պպականցին մեր կեանքը: Մեր համակրողներին միշտ այգպիսի արդար ուզի, ազնիւ սիրտ և խոր թափանցող հայեացք ենք ցանկանում: Ձէ՛ որ սոցա հետեանքն էլ ազնիւ գործն է լինում:
- ԹԱԻՐԻՉ. Ատրպետ.**—«Բէհայիները» ստացանք և կտպենք հետեակ համարից:
- Ա. Տ.**—Ձեր բանաստեղծութիւնները չեն տպուի: Պէտք է նախապէս զարգացնէք Ձեր քանքարը:
- ՌՈՍՏՈՎ. Օր. Գ. Ս.**—Շատ ուրախալի է որ օտար թերթի աշխատակցութիւնից դիմում էք հայ գրականութեան նուիրելու Ձեր ոյժերը. Ձեր յօդուածը ստացանք. կկարդանք և կկարգադրենք:
- Պ. ԲՈՒՐԳ. Բժշկատ. Կ. Աղ.**—«Հոգեկան վարակումն և նորա նըշանակութիւնը» ստացանք և կտպենք միւս համարում Ձեր ցանկութեան համեմատ:

Խմբագիր-չրատարակիչ ԴԻԻՏ Ա. ԲԱՀ. ԱՂԱՆԵԱՆՏ